

ՕՐԵՐԼԵՆԵՐԸ

Վ Է Գ

ՐԵՆԷ ԲԱՂԷՆԻ

Իր որդու ներս մտնելը տեսնելով՝ նա երեսը դարձրել էր դէպի այն պատուհանը՝ որ նայում էր պարկի վրայ, խաչածեղի էր սրունքները, և աջ արժուկով յենուել էր գրասեղանին: Նա հետաքրքրութեամբ, ժպիտով քննում էր այն մեծ, սիրուն և նրբամարմին տղամարդը, իր որդին, որ պատրաստում էր նստել իր դիմաց: Տեսնելով նրան թիկնաթոռի մէջ ընկողմանած և ժպտալիս իր սեփական ժպիտի ծիծաղով, զննելով այս լիբը, երկու թուխ ծնօտամօրուսով շրջանակուած դէմքը, և աջ, դէպի վեր բարձրացած ձեռքի շարժումը, որով բռնում էր գլուխը և խաղում էր ակնոցի կապի հետ, այս բոլորից շատ հեշտ էր հասկանալ, որ պ. Ժողէֆ Օրբերլէին դատաւորի տեղ ընդունողները սխալում էին: Բայց, աչքերը՝ յորդ լոյսի պատճառով մի փոքր քթթած՝ շատ կենդանի և շատ խոստահայեաց էին և ցոյց էին տալիս, որ նրանց տէրը գործողութեան մարդ միայն կարող էր լինել: Նրանք հակապատկեր էին կազմում շրթների մեքենական ժպիտի հետ: Գիտական, աշխարհիկ կամ հայրական ոչ մի հետաքրքրութիւն չէին մատնում: Նրանք պարզապէս մի ճանապարհ էին որոնում, ինչպէս նաև վարի աչքերը՝ կարողանալ անցնելու համար: Հազիւ պ. Օրբերլէ հարցրել էր. «Ի՞նչ ունես ինձ ասելու» որ նա պատասխանեց.

— Այս առաւօտ մօրդ հետ խօսել ես:

— Ո՛չ

— Լիւսիէննի՞ հետ:

— Ո՛չ էլ նրա հետ. սենեակիցս հէնց նոր եմ դուրս գալիս:

— Աւելի լաւ: Պէտք է որ մենք՝ երկուսս միասին մեր

*) Տես «Մուրճ» № 4

ծրագիրը կազմենք, առանց ուրիշների միջամտութեան... Ես թոյլ տուի որ դու վերադառնաս և ընակուես այստեղ, գլխաւորաբար նրա համար, որ մենք կարողանանք ըստ պագայի մասին խորհել: Նախ, հոկտեմբեր ամսում պէտք է կատարես զինուորական ծառայութիւնդ, հաստատապէս վճռել ես, այնպէս չէ:—Նա շեշտեց վերջին բառերի վրայ—և պիտի դառնաս պահեստի սպայ...

Ժանն՝ անշարժ, իրանը ուղղածից, հայեացքը շեշտակի, և գրաւիչ լրջութեամբն այն երիտասարդին, որ խօսում է իր պագայի մասին, և որ իր պատասխանի մէջ դնում է այն որոշ շանքն ու չափաւորութիւնը որ երիտասարդին անսովոր է, ասաց.

—Այո, հայր, այդ է իմ դիտաւորութիւնը:

Ուրեմն առաջին կէտը կարգադրուած է: Իսկ յետոյ: Դու տեսար աշխարհը: Դու ճանաչում ես այն ժողովուրդին, որի մէջ պէտք է ապրես: Դու գիտես, որ գերմանական ատենակալութեան մէջ յաջող կերպով մուտք գործելուդ յոյսերը մի քանի ժամանակից վեր աւելացել են, որովհետև իմ սեփական դիրքս լաւացել է, աչքի խփող աստիճանով բարձրացել, Ալգասում:

—Գիտեմ:

—Դու գիտես նոյնպէս, որ իմ ցանկութիւնը՝ քեզ այդ ասպարէզում մտած տեսնել, երբէք չէ փոխուել, ասպարէզ, որին ես ինքս հետևած կը լինէի, եթէ հանգամանքները աւելի զօրեղ եղած չլինէին, քան իմ կամքը:

Որպէս թէ այդ բառը նրա մէջ յանկարծ վառած լինէր կամքի ուժը, պ Օբերլէի աչքերը յառեցին, հրամայողական, տիրապետող, իր որդու աչքերին, ինչպէս ճանկեր, որոնք էլ չեն բաց թողնի: Նա դադարեց խաղալ իր ակնոցի հետ և արագութեամբ ասաց.

—Քո վերջին նամակները ցոյց էին տալիս սակայն, որ դու վարձնում ես: Պատասխանիր ինձ: Դատաւոր պիտի դառնաս:

Ժանն թիթեօրէն տժգունուեց և պատասխանեց.

—Ո՛չ:

Հայրը կուսցաւ դէպի առաջ, որպէս թէ պատրաստուէր վեր կենալու, և, առանց աչքերը հեռացնելու նրանից, որի բարոյական կորոյն էր կշռում, դատում այդ բոպէին.

—Վարչական մտքդ:

—Ո՛չ էլ վարչութեան մէջ կը ծառայեմ: Պաշտօնականն ո՛չ մի գործ:

—Ապա քո իրաւաբանական ուսումնը:

—Աւելորդ է:

—Որովհետև:

—Որովհետև, ասաց երիտասարդը ջանալով իր ձայնը խելօքացնել, ես գերմանական ոգի չունիմ: Պ. Օրբերլէ այդպիսի պատասխանի չէր սպասում: Դա նրա դէմ, մի պարտաւ էր: Նա յանկարծ վեր ցատքեց տեղից, և, բնազդաբար նայեց դէպի արհեստանոցը՝ վստահ լինելու համար, որ նրանց լսող կամ հեռուից այդ խօսքերի իմաստը գուշակող չկամ: Նա տեսաւ որ բազմաթիւ բանուորները հայեացքը ուղղուած էր դէպի իրանց. նրանք կարծում էին որ վարպետը նայում է իրանց կողմը հսկելու համար իրանց աշխատանքի վրայ, և շուտով խոնարհեցրին իրանց աչքերը: Պ. Օրբերլէ մտեցաւ իր որդուն: Բուռն գայրոյթով լեցուած էր: Բայց հասկացաւ որ չպէտք էր իր գայրոյթը մատնել: Վախենալով որ ձեռները իր յուզումը չյայտնեն, նա բռնեց իր նստած թիկնաթոռի երկու բազուկներէից, և քիչ առաջուայ նման կուացած՝ այժմ սկսեց ոտքից մինչև գլուխ, իր դիրքի, իր հագուստի և իր կերպարանքի մէջ քննել այն երիտասարդին, որ սառնարիւնով այնպիսի մտքեր էր արտայայտում, որոնք հօր վարմունքի դէմ արձակուած դատապարտութեան վճռի շատ նման էին: Մի բոպէ լսելուց յետոյ, խեղդուկ ձայնով հարցրեց.

—Ո՞վ հանեց քեզ ինձ դէմ: Մ'սիրո՞ւ:

—Ինչո՞ւ համար մայրս, ո՛չ որ, պատասխանեց աշխուժով Ժան Օրբերլէ: Ես ձեզ դէմ ոչինչ չունեմ: Ինչո՞ւ իմ միտքն այդպէս էք բացատրում: Ես ասում եմ գերմանական ոգի չեմ կրում իմ մէջ: Դա մի երկար բաղդատութեան արդիւնք է. ուրիշ ոչինչ:

Պ. Ժողէֆ Օրբերլէ տեսաւ, որ շատ էր բացուել: Նա իր անկեղծութեան սանձը քաշեց, և, այն սառը հեզնութեամբ, որի շնորհիւ նա թաղցնում էր իր իսկական զգացումները.

—Քանի որ դու հրաժարուում ես այն ասպարէզից, որի համար քեզ պատրաստել էի, ուրեմն դու քեզ համար մի ուրիշը գտե՛լ ես:

—Անկասկած, միայն ձեր հաւանութեամբ:

—Ո՞րը:

—Ձեր ասպարէզը: Սխալ չհասկանաք ասածս: Ես ապրեցի առանց կուռի, տասը տարի շարունակ, բացառապէս գերմանական մի միջավայրում: Ես գիտեմ թէ դա սրբան թանգ արժեց ինձ համար: Դուք ինձ հարցնում էք իմ փորձառութեան արդիւնքի մասին. լաւ, լսեցէք. ինձ թւում է որ իմ նկարագիրը բաւական ձկուն, եթէ կամենում էք, բաւական բարեհամբոյր չէ, որպէսզի աւելին յանձնառու լինեմ և մի

գերմանացի պաշտօնայ դառնամ: Ես վստահ եմ որ ամեն ինչ չպիտի ըմբռնեմ միշտ և երբեմն անհնազանդ պիտի լինեմ: Իմ վճիռն անդառնալի է: Իսկ, ընդհակառակը, ես սիրում եմ ձեր ճարտարարուեստը, ինդուստրիան:

— Դու երևակայում ես որ մի գործարանատէր անկախ է:

— Ո՛չ, բայց աւելի քան ուրիշները: Ես իրաւարանութեան հետեւեցայ, որպէսզի առանց խորհրդածութեան, առանց քննութեան չմերժեմ այն ճանապարհը, որ դուք ինձ ցոյց էիք տալիս: Բայց ես օգտուեցի այն ճանապարհորդութիւններից, որ, ամեն տարի, դուք ինձ... առաջարկում էիք...

— Կարող ես ասել, որ ստիպում էի քեզ կատարել այդ ճանապարհորդութիւնները: Ըշմարտութիւնն այդ է. և ես քեզ կը բացատրեմ թէ ինչո՞ւ:

— Ես նրանցից օգտուեցի ուսումնասիրելու համար անտառային ինդուստրիան այն բոլոր վայրերում, ուր ես այդ կարողացայ, Գերմանիայում, Աւստրիայում, Կովկասում: Մի կարծէք որ այդ հարցում բոլորովին անփորձ եմ: Եւ ես ցանկանում եմ ապրել Ալլէյմում: Թոյլ կը տամք:

Հայրը նախ չպատասխանեց: Նա աշխատում էր իր որդու վրայ գործ դնել այն փորձառութիւնը, որին յօժարակամ ենթարկում էր այն մարդկանց, որոնք գալիս էին իր մօտ մի կարևոր գործի մասին խօսելու: Նա լսում էր այն ըստէին, երբ իրանից պահանջում էին վճուական խօսքեր: Եթէ խօսակիցը՝ շփոթուած՝ երեսը շուռ տար խուսափելու համար այն հայեացքից, որով նա կարծես ուզում էր ճնշել, կամ եթէ նորից մտնէր բացատրութիւնների մէջ, պ. Փողէֆ Օրերլէ նրան դասում էր տըկարակամ մարդկանց շարքը, իրանից ստոր կանգնած մարդկանց շարքը: Ժան իր հօր հայեացքից խոյս չտուեց, և բերանն անգամ բաց չարեց: Պ. Օրերլէ այդ բանի համար գաղտնապէս ուրախացաւ, իրան շոյուած զգաց: Հասկացաւ, որ գտնուում է մի կատարելապէս կազմուած մարդու դիմաց, մի վճուական և հաւանականաբար անյողզող կամքի առաջ: Նա այդ կարգի մարդկանց ճանաչում էր իր շուրջը: Գաղտնապէս գնահատում էր նրանց ոգու անկախութիւնը և երկնչում էր նրանցից: Կոմբինացիայի և կազմակերպութեան իր բնական արագութեամբ, նա իր մտքի առաջ պատկերացրեց շատ յստակ կերպով Ալլէյմի ինդուստրիան, որը վարում էր Ժանը, և Ժանի հայրը, Փողէֆ Օրերլէ, բազմել էր Բայխստագում, ընդունուած՝ ֆինանսիստների, վարչական անձերի և գերմանական աշխարհի հօգընների շարքում: Նա այն մարդկանցից էր, որոնք գիտեն մինչև անգամ իրանց յուսախաբութիւններից օգտուել, ինչպէս օգտուում

են գործարանի թափթիուքներից: Այդ նոր պատկերը նրան խանդաղատեցրեց: Փոխանակ գայլանալու, թողեց որ իր հեզնական դէմքը իր նախկին հանդարտութիւնն ստանայ: Ձեռքի մի շարժումով ցոյց տուեց անսահման գործարանը,—ուր, անդադար, այնպիսի խուլ գղրղիւնով, որ թեթևօրէն ցնցում էր կրկնակի ապակիները, պողպատէ հատու գործիքները մտնում էին վոժերի հիւսաւուրց ծառերի սիրտը,—և սիրալիբ կըշտամբանքի շեշտով ասաց:

—Թո՛ղ այդպէս լինի, զաւակս: Դա պիտի ուրախացնէ իմ հօրը, քո մօրն ու Ուլրիխին: Ես ընդունում եմ որ դու ինձ մեղաւոր գտնես, հանդէպ նրանց՝ մի կէտում, բայց միայն մի կէտում: Մի քանի տարի առաջ, ես քեզ թոյլ չէի տայ որ դու հրաժարուես այն ասպարիզից, որը ինձ թւում էր լաւագոյնը քեզ համար, և որը մեզ պաշտպանելու էր այն դժուարութիւնների դէմ, որոնց չափն ու աստիճանը անկարող ես որոշելու: Այդ ժամանակ դու չէիր կարող ինքդ դատել: Եւ, բացի այդ, ես իմ ճարտարարուեստը, իմ դիրքը շատ խախուտ և շատ վտանգաւոր էի համարում, որպէսզի նրանց քեզ փոխանցէի: Այժմ ամեն ինչ փոխուած է: Իմ գործերը ընդարձակուել են: Կհանըր ինձ համար տանիլի է, ինչպէս և ձեզ, բոլորիդ համար, շնորհիւ այնպիսի ջանքերի և գուցէ գոհողութիւնների, որոնց համար, ինձ շրջապատողները՝ բաւականաչափ երախտապարտ չեն զգում իրանց: Այսօր, ընդունում եմ, որ այս արհեստը ունի ապագայ: Ուզում ես իմ յաջորդը լինել: Լաւ, իսկոյն և եթ՛ք ըր առաջ բաց կանեմ զուռը: Մինչև վիսուտրագրութիւնդ դեռ եօթ ամիս կայ, դու կաշխատես այդ ժամանակամիջոցում եփուել գործի մէջ, փորձառութիւն ստանալ: Այն, համաձայն եմ, բայց, մի պայմանով:

—Ի՞նչ պայմանով:

—Ինչպէս քանակութեամբ չպիտի զբաղուես:

—Արդէն ես այդ բանի համարախորժակ էլ չունեմ:

—Ա՛, ներողութիւն, շարունակեց պ. Օբերլէ տաքանալով. պէտք է որ մենք միմեանց լաւ հասկանանք, այնպէս չէ՛: Ես չեմ կարծում որ չունենաս դու քո քաղաքական որոշ ձգտումը. գուցէ դեռ տարիքդ չէ ներում, կամ խառնուածքդ: Ես այդ բանը քեզ չեմ արգելում... Ես արգելում եմ քեզ ալգասական թիւու ազգասիրութիւնը, շովինիզմը. ես չեմ ուզում որ դու անդադար ամեն դէպքում կրկնես, ինչպէս ուրիշներ. «Փրանսախան», «Փրանսիան», կրես քո բաճկոնակի տակ մի եռագոյն գօտի, նմանուես Ստրազբուրգի ալգասցի ուսանողներին, որ, միմեանց ճանաչելու և միմեանց դաշնակցելու համար, շուսցնում են, ոտտիկանութեան ականջի առաջ Մարսէյնէզի ե-

դանակը. «Կազմեցէք ձեր գնդերը:» Միրելին, ես չեմ ուզում գործողութեան այդ փոքրիկ ձևերը, այդ փոքրիկ ընդվզումները և նրանց մեծ վտանգները: Դրանք այնպիսի ցոյցեր են, որ մեզ արգելուած են, մեզ՝ գերմանական երկրում խնդուատրիով պարապողներին: Նրանք հակասում են մեր աշխատանքին, մեր շահերին, որովհետև Ֆրանսիացիները չեն մեր յաճախորդները: Ֆրանսիան շատ հեռու է, սիրելիս, աւելի քան 200 մղոնով հեռու մեզանից, դո՛նէ մարդ այդպէս է կարծում, դատելով այն քիչ աղմուկից, քիչ շարժումից ու փողից, որ մտնում են այստեղ: Մի մտանայ այս: Դու, քո կամքովդ, գերմանացի գործարանատէր ես դառնում. եթէ գերմանացիներից շուռ տաս երեսուդ, դու կորած ես: Մտածիր ինչ որ ուզում ես քո երկրի պատմութեան, անցեալի և ներկայի մասին: Դրանց մասին քո կարծիքներն ինձ չեն հետաքրքրում: Ես չեմ ուզում նոյնիսկ փորձել գուշակելու, թէ նրանք ի՞նչ ձև, ի՞նչ դոյն կարող են ունենալ այնպիսի մի յետամնաց միջավայրում, որպիսին է մեր Ալշէյմը. բայց ինչ որ էլ խորհես, իմացիլը պատրաստել, կամ պատրաստիլ քո ապագան այլուր: Ժանի ոլորուած բեխերի տակ մի ժպիտ ուրուագծուեց, մինչդեռ նրա դէմքի վերին մասը մնում էր լուրջ և անյողողող: Նա ասաց.

—Վստահ եմ, հետաքրքիր էք իմանալու, թէ ի՞նչ եմ խորհում Ֆրանսիայի մասին:

—Լաւ, ասան:

—Ես նրան սիրում եմ:

—Դու նրան չես ճանաչում:

—Ես ուշադրութեամբ կարդացի նրա պատմութիւնն ու գրականութիւնը, և համեմատեցի գերմանականն հետ. անձ բոլորը: Այդ արդէն բաւական է, երբ մանաւանդ մարդ նոյն ցեղին է պատկանում, որ մնացեալը գուշակելով իմանայ: Ուրիշ կերպ նրան չեմ ճանաչում, ճիշտ է, դուք հարկաւոր նախազգութիւնները ձեռք առել էիք...

—Դու ուղիղ ես ասում, թէպէտև քո խօսքերի մէջ թաղանուած լինին գուցէ մի վերաւորիչ դիտում...

—Երբէք:

—Այո, ես հարկաւոր նախազգուշութիւնները ձեռք առի, որպէսզի դուք, դու և քոյրդ, ազադրուէիք աղիտաբեր ընդդիմազրութեան այն ոգուց, որ ձեր կեանքը պէտք է ցամաքեցնէր առաջին օրերից իսկ, որ ձեզ պիտի դարձնէր դժգոհներ, անկարողներ, խեղճեր, այն կարգի մարդիկ, որոնք շատ բազմաթիւ են Ալշասում և որոնք ո՛չ մի ծառայութիւն չեն մատուցանում ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ Ալզասի, ո՛չ իրանց՝ Գերմանիա-

յին մատակարարելով քէնի, բարկութեան շարունակական պատճառներ: Ես գոհ եմ, որ դու ինձ ստիպեցիր բացատրութիւն տալ դաստիարակութեան այն սիստէմի մասին, որը միմիայն ես ցանկացայ քեզ համար: Ես ուզեցի քեզ խնայել այն դառն փորձը, որ ես՝ ինքս ճանաչեցի, և որի մասին քիչ առաջ խօսեցայ: Հիմնել իր նպատակին: Կար և մի ուրիշ պատճառ: Ահ, գիտեմ որ այս հարցի վերաբերմամբ դէպի ինձ բոլորովին արդար չպիտի լինեն: Եւ այդ պատճառով էլ ստիպուած եմ ես ինձ գովել եմ սեփական ընտանիքում: Զաւակս, անկարելի է Ֆրանսիայում մեծացած լինել, իր ծագումով, իր բոլոր կապերով Ֆրանսիային պատկանել և չսիրել Ֆրանսիական կուլտուրան...

Մի բոպէ խօսքն ընդհատեց, տեսնելու համար թէ ի՞նչ տպաւորութիւն թողել էր այդ նախադասութիւնը. ոչինչ չընշմարեց, ոչ իսկ մի սարսուռ իր որդու անտարբեր դէմքի վերայ. Ժանը, անկասկած, շատ ուժեղ խառնուածքի, բնաւորութեան տէր մարդ էր: Իրան արդարացնելու անողոք պէտքը հարկադրեց պ. Օբերլէին դարձեալ շարունակել խօսքը.

—Դու գիտես, որ այստեղ Ֆրանսիական լեզուին խէթ աչքով են նայում, իմ սիրելի Ժան: Բավիերայում դու ստացար գրական, պատմական այնպիսի դաստիարակութիւն, որը չպիտի ստանայիր Ստրազբուրգում: Ես կարող եղայ պատուիրել, առանց քեզ քո ուսուցիչների աչքին կասկածելի դարձնելու, որ քեզ Ֆրանսերէնի յաւելուածական դասեր աւանդեն: Այն, այն պատճառները, որով ղեկավարուել եմ Փորձը ցոյց կը տայ թէ սխալմեւ եմ արդեօք: Յամենայն դէպս, ինչ որ արի, արի բարեմտութեամբ և քո օգտի համար:

—Սիրելի հայր, ասաց Ժան, ես իրաւունք չունիմ ձեր արածը դատելու: Ինչ որ կարող եմ ասել, այն է, որ շնորհիւ իմ ստացած դաստիարակութեան, եթէ ես չեմ ակորժում կամ անպայման չեմ հիանում գերմանական քաղաքակրթութեամբ, զոնէ վարժուցի գերմանացիների հետ ապրել: Եւ ես համոզուած եմ, որ կարող կը լինեմ նրանց հետ ապրել Ալգասում:

Հայրը յօնքերը ցնցեց, կարծես ասելու համար. «Ո՞վ է իմանում»:

—Իմ գաղափարները, մինչև այժմ, ոչ մի թշնամի չեն յարուցել ինձ դէմ Գերմանիայում. և ինձ թոււմ է, որ կարելի է վարել մի սղոցարան, գրաւուած երկրում, այն աշխարհայեացքներով, որոնք ձեզ պարզեցի:

—Յոյս ունիմ, չոր պատասխանեց պ. Օրերլէ:

—Ուրիմն դուք ինձ ընդունում էք: Ձեր գործի մէջ մտած կարող եմ համարուել:

Իբրև միակ պատասխան, պ. Օրերլէ մատը դրեց մի է-լէքտրական կոճակի վրայ:

Մի մարդ բարձրացաւ այն աստիճաններից, որոնք առաջ-նորդում էին մեքենաների սրահից պ. Օրերլէի գտնուած դի-տարանը, բաց արեց հնչուն դուռը, և, կիսաբաց դռնից երևե-ցաւ մի մարդ՝ խարտեաչ, քառակուսի ձորուքով, երկար մազերով և երկու ափի նման կապոյտ աչքերով:

—Գիշե՛ս, ասաց վարպետը գերմաներէն, որդուս պիտի ծանօթացնէք սղոցարանի գործի հետ և նրան պիտի բացատրէք վեց ամսից ի վեր մեր կատարած բոլոր գնումները: Վաղուա-նից սկսած՝ նա ձեզ կընկերակցի այն այցելութիւնների ժամա-նակ, որ դուք պիտի տաք մեր հաշուին կտրուող անտառները:

Դուռը վերստին փակուեց: Երիտասարդ, խանդավառ, նրբահասակ ժան Օրերլէն վեր էր կացել տեղից: Ձեռքը մեկ-նեց նրան և հրճուանքից դժգունած՝ ասաց:

—Ես նորից արգասեցի դարձայ: Ո՛րքան շնորհակալ եմ:

Հայրը որդու ձեռքը սեղմեց մի քիչ կեղծ սրտազեղումով: Մտածում էր. «Մա, ճիշտ որ մօր պատկերն է: Ես սրա մէջ գտնում եմ Մոնիկի ոգին, խօսքերը, խանդավառութիւնը»՝ Բարձրաձայն ասաց.

—Տեսնում ես, զաւակս, որ ես միայն մի նպատակ ու-նիմ—բաղդաւորացնել ձեզ: Միշտ ունեցել եմ այդ նպատակը: Ես համաձայն եմ որ դու մտնես մի այլ ասպարէզ, քան այն՝ որ երազել էի քեզ համար: Ջանա՛, այժմ, ըմբռնել մեր դրութիւնը, ինչպէս ըմբռնում է բո քոյրը...

Ժան դուրս եկաւ, և նրա հայրը, մի քանի բոպէից յե-տոյ, նոյնպէս: Բայց մինչդեռ պ. Ժոզէֆ Օրերլէ քայլերն ուղ-ղում էր դէպի տուն, շտապելով տեսնել իր աղջկան, իր միակ խորհրդակցին, և նրան պատմելու ժանի հետ ունեցած խօսակ-ցութիւնը, այս վերջինը շինուածանիւթերի պահեստարանի մի-ջից անցնելով՝ խոտորուեց դէպի աջ, անցկացաւ դռների առա-ջով և անտառի ճանապարհը ձեռք առաւ: Բայց, որովհետև ճաշի ժամը մօտ էր, շատ հեռու չգնաց: Ձառիվեր ճանապար-հով բարձրացաւ և հասաւ Ալլէյմի այգեստանները, որ ձգւում էին հմուլաստաններից *) (houblonnière) վերև, որոնք դեռ ևս մերկ դաշտեր էին, որոնց վրայ, այս ու այն կողմ,

*) Բոյս՝ որով դարեջուր են պատրաստում:

ցցուած էին միացած, խուրձեր կազմող ձողեր: Նրա հողին տօնի մէջ էր: Հասաւ մի այգու մուտքի առաջ, որը ճանաչուած էր երեսխալութեան հասակից, և ուր այգեգութ էր արել հեռու անցեալում. բարձրացաւ մի բլրակի լանջին, որը տիրապետում էր ճանապարհի, և վերից վար կարգով շարուած որթերի վրայ: Հակառակ տխուր լոյսին, հակառակ ամպերին և հողմին, գեղեցիկ, զմայլելիօրէն գեղեցիկ գտաւ իր Ալզասը. որ փոքրիկ զառիվայրերով իջնում և քիչ յետոյ միապաղաղ դաշտի նման տարածուած էր իր առաջ, խոտի լայն շերտերով և հերկի գօտիներով, որոնց միջից գիւղերը, դէս ու դէն, բարձրացնում էին իրանց կղմինտեայ տանիքներն ու դանգակատան կատարները: Կլոր, առանձնացած, ձմեռուայ պատճառով սպիտակած ծառեր՝ չոր եկքանների (chardon) էին նմանուած: Մի քանի ագռաւներ՝ հիւսիսի քամուց նպաստաւորուած՝ ճախրում էին և որոնում էին նոր սերմանուող դաշտեր: Ժան բարձրացրեց ձեռքերն ու երկարեց, որպէս թէ գրկելու համար այն տարածութիւնը, որ ձգուած էր Օբերնէից սկսած, որը նըշմարուած էր ձախակողմում, հովտի վերջին ելեկշնեղում, մինչև Բարր, աշակողմում, կիսով թաղուած՝ լեռնից իջնող եղևինների կոյտի տակ:

—Միտում եմ քեզ, Ալզաս, և դարձեալ գալիս եմ գէպի քեզ, բացազանչեց:

Նայեց Ալշէյմ գիւղին, կարմիր քարից շինուած այն տնին, որ իր գլխից էլ մի քիչ վեր էր բարձրանում, և որը իրանն էր. յետոյ աչքերը յառեց գործաւորների և գիւղացիների բնակարանների կոյտի միւս ծայրին, թաւուտների մի տեսակ հըրւանդանի վրայ, որը երկարուած էր լերկ դաշտի մէջ: Դն մի ծառուղի էր, որ վերջանում էր տերեաթափ, մոխրագոյն ծառերի մի խոշոր պուրակով, որոնց մէջտեղից նշմարուած էին մի տանիքի կողերը: Ժան աչքերը երկար ժամանակ սեռեց այդ կիսով չափ թաղնուած բնակարանի վրայ և սասց.

«Բարե, ալզասուհի: Ո՞վ գիտէ, գուցէ կարողանամ քեզ սիրել: Ո՞րքան երջանկութիւն, ապրել քեզ հետ այստեղ!»

Չանգալը հնչեց, Օբերնէներին ձաշի հրաւիրելու համար: Նրա զօղանջը խուլ էր ու խեղդուկ՝ և ցոյց էր տալիս ազատ տարածութեան անհունութիւնը, ուր նուազում էր ամեն ազմուկ, և հողմի ու ժգնութիւնը՝ որ նրան թոցնում էր Ալզասի հողերի վրայից հեռու, շատ հեռու:

Ժան շտապեց վերադառնալ:

(Կը շարունակուի)